

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԻՏԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ**

<b>1. Ընդհանուր դրույթներ</b>
<p><b>1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը</b>          Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գիտական գործունեության կազմակերպման վարչության (այսուհետ՝ Վարչություն) գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 18-1-27.2-Մ4-2)</p> <p><b>1.2 Ենթակա և հաշվետու է</b>          Բաժնի ավագ մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին</p> <p><b>1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</b>          Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը</p> <p><b>1.4 Աշխատավայրը</b>          Հայաստան, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Օրբելի եղբայրների 22</p>
<b>2. Պաշտոնի բնութագիրը</b>
<p><b>2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</b></p> <ul style="list-style-type: none"> <li>մասնակցում է գիտական և գիտատեխնիկական փորձաքննության (այսուհետ՝ Փորձաքննություն) բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակման և Փորձաքննության բնագավառի իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին.</li> <li>մասնակցում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային ֆինանսավորման հետ կապված հայտերի և հաշվետվությունների գիտական Փորձաքննության կազմակերպման աշխատանքներին.</li> <li>մասնակցում է միջազգային ինդեքսավորված ամսագրերում գիտական հրապարակումների խրախուսման մեխանիզմների մշակման և ներդրման աշխատանքներին.</li> <li>մասնակցում է օտարերկրյա պետությունների, այդ թվում՝ Սփյուռքի գիտնականների ներուժը Փորձաքննության նպատակով ուղղված ծրագրերի մշակման աշխատանքներին.</li> <li>մասնակցում է Փորձաքննության պետական հավատարմագրման կարգի և չափանիշների մեթոդական և կազմակերպատեխնիկական հիմքերի, Փորձաքննության կազմակերպիչներին և</li> </ul>

Փորձագետներին առաջադրվող պահանջների մշակման աշխատանքներին:

### **Իրավունքները՝**

- համապատասխան մարմիններից, գիտական ծրագրերի ղեկավարներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր.
- Բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ փորձաքննության գործընթացի կազմակերպման բարելավման վերաբերյալ.
- մասնակցել իրավական ակտերի նախագծերի նախապատրաստմանը, քննարկումներին, նախագծերի փաթեթների վերաբերյալ շահագրգիռ նախարարություններից ստանալ կարծիքներ.
- նախապատրաստել Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող առաջարկություններ, եզրակացություններ, փաստաթղթեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, ինչպես նաև մասնակցել դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակման աշխատանքներին:

### **Պարտականությունները՝**

- Փորձաքննության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության, Փորձաքննության բնագավառի իրավական ակտերի նախագծերի, Փորձաքննության պետական հավատարմագրման կարգի և չափանիշների, պետական Փորձաքննության մեթոդական և կազմակերպատեխնիկական հիմքերի, Փորձաքննության կազմակերպիչներին և փորձագետներին առաջադրվող պահանջների մշակման աշխատանքների գործընթացում մասնակցել միջազգային փորձի ուսումնասիրության, հավաքագրված տվյալների վերլուծության, իրավական ակտերի շրջանառման և հանրային քննարկումների կազմակերպման, ստացված կարծիքների ու առաջարկությունների ամփոփման և դրանք Բաժնի պետին ներկայացման աշխատանքներին.
- գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, պայմանագրային (թեմատիկ), նպատակային-ծրագրային ֆինանսավորման, գիտական միջոցառումների, գիտական գործուղումների, գիտական սարքավորումների ձեռքբերման հայտերի և հաշվետվությունների Փորձաքննության իրականացման գործընթացում մասնակցել հայտերի ընդունման, մրցույթի հրավերի պահանջների հետ համապատասխանության ստուգման, փորձագետներին տրամադրման աշխատանքներին, արտերկրներում ու Հայաստանի Հանրապետությունում իրականացված գիտական ծրագրերի՝ Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված աշխատանքների, փորձագիտական համակարգի բարելավման և փորձարկման՝ գիտական ծրագրերի, թեմաների (այդ թվում՝ համաֆինանսավորման սկզբունքով կատարվող), ինչպես նաև, փորձագիտական համակարգի գործունեության համար անհրաժեշտ էլեկտրոնային շտեմարանների ստեղծման և համալրման աշխատանքներն իրականացնել՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված կարգն ու ժամկետները.
- միջազգային ինդեքսավորված ամսագրերում գիտական հրապարակումների խրախուսման մեխանիզմների մշակման և ներդրման գործընթացներին մասնակցելիս կատարել տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն, միջազգային փորձի ուսումնասիրություն,

խրախուսման մեխանիզմների մշակում և Բաժնի պետին ներկայացում.

- ստանալով գիտական և գիտատեխնիկական գործունեություն ծավալող կազմակերպությունների և աշխատակիցների գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ մասնակցել գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության վերլուծության, գիտական գործունեության արդյունավետության գիտաչափական գնահատման աշխատանքներին.

- օտարերկրյա պետությունների, այդ թվում՝ Սփյուռքի գիտնականների ներուժի ներգրավմանն ուղղված ծրագրերի իրականացման շրջանակներում ուսումնասիրել և վերլուծել գիտնականների գիտական գործունեությանը վերաբերող տեղեկատվությունը, մշակել, իրականացնել Փորձագիտական համակարգի գործունեության համար անհրաժեշտ էլեկտրոնային շտեմարաններում դրանց լրացման և համաժամանակեցման, շտեմարանների ստեղծման և համալրման աշխատանքները:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1 Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

#### **3.2 Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

#### **3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ

#### **3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

##### **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

##### **Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Ծառայությունների մատուցում
2. Փաստաթղթերի նախապատրաստում
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
4. Ժամանակի կառավարում

### **4. Կազմակերպական շրջանակը**

#### **4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

#### **4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների

վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

#### **4.3 Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

#### **4.4 Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

#### **4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: